BYBLOS BANK ARMENIA

«Շահելու 22 հնարավորություն»
արշավի անցկացման և մասնակցության կանոններ

1. Mastercard-ի հետ համատեղ անցկացվող արշավին կարող են մասնակցել Բիբլոս Բանկ Արմենիայի բոլոր Mastercard World քարտապանները:

2. Հաղթող ճանաչված հաճախորդներից յուրաքանչյուրը կստանա ներքոնշյալ նվերներից մեկը՝

I. 2 ճամփորդական նվեր քարտ՝ յուրաքանչյուրը 2.5 մլն դրամ արժողությամբ
II. 20 նվերների փաթեթ՝ յուրաքանչյուրի մեջ մեկ ճամպրուկ, մեկ պարանոցի բարձ

2.1. Ճամփորդական նվեր քարտը կարող է օգտագործվել Բանկի կողմից ընտրված տուրիստական ընկերություն(ներ)ից ճամփորդական ծառայությունների ձեռքբերման համար՝ ավիատոմս, գիշերակաց, սնունդ հյուրանոցում, տրանսֆեր և այլն: Նվեր քարտը կարող է օգտագործվել մեկ կամ մեկից ավելի անձանց հանգիստը կազմակերպելու համար:

2.2. Չորս ամսվա ընթացքում յուրաքանչյուր ամիս կխաղարկվի 5 նվերների փաթեթ, իսկ ճամփորդական նվեր քարտերը կխաղարկվեն վերջին խաղարկության ընթացքում:

2.3. Տվյալ ամսվա նվերների փաթեթների հաղթողները այլևս հնարավորության չեն ունենա մասնակցելու հաջորդ ամիսների նվերների փաթեթների խաղարկությանը, սակայն հնարավորություն կունենան մասնակցելու ճամփորդական նվեր քարտերի խաղարկությանը: Ճամփորդական նվեր քարտերի խաղարկությանը կմասնակցեն մասնակիցներին տրամադրված բոլոր կոդերը (ներառյալ նախորդ խաղարկություններում նվերների փաթեթ շահած կոդերը):

2.4. Յուրաքանչյուր Քարտապան կարող է շահել միայն մեկ ճամփորդական նվեր քարտ և մեկ նվերների փաթեթ:

3. Ակցիայի շրջանակում հաղթողները կորոշվեն ուղիղ եթերում անցկացվող խաղարկության ընթացքում պատահականության սկզբունքով, որը կկազմակերպվի McCann Erickson գովազդային ընկերության կողմից:

4. Խաղարկությանը կարող են մասնակցել Բիբլոս Բանկ Արմենիայի հաճախորդները, որոնք 2026 թ. ապրիլի 1-ից մինչև հուլիսի 31-ն ընկած ժամանակահատվածում Բիբլոս Բանկ Արմենիայի իրենց Mastercard World քարտով կկատարեն անկանխիկ վճարումներ (ներառյալ Apple Pay-ի ու Google Pay-ի միջոցով) POS և ePOS տերմինալներով՝ ստորև ներկայացված չափերով՝

- Տվյալ ամսվա ընթացքում յուրաքանչյուր 250,000 ՀՀ դրամի չափով (կամ համարժեք փոխարժույթով) կատարած գնումների համար Mastercard World քարտապանն էլեկտրոնային նամակով կստանա մեկ կոդ: Տվյալ ամիս տրամադրված կոդերը չեն կարող մասնակցել հաջորդ ամիսներին նվերների փաթեթների խաղարկությանը, սակայն կմասնակցեն վերջին խաղարկության ժամանակ ճամփորդական նվեր քարտերի խաղարկությանը:
- Տվյալ ամսվա հաղթողները կարող են շարունակել հավաքել կոդեր ու մասնակցել ամենավերջին՝ ճամփորդական նվեր քարտերի խաղարկությանը: Որքան շատ կոդեր հավաքի Քարտապանը արշավի 4 ամիսների ընթացքում, այնքան կմեծանա ճամփորդական նվեր քարտ շահելու հավանականությունը:

5. Քարտապանը պետք է արշավի մասնակցության կանոններով սահմանված չափով վճարումներն անի միևնույն քարտով: Քարտապանն արշավին կարող է մասնակցել մեկից ավելի քարտերով և ստանալ կոդեր, եթե յուրաքանչյուր քարտի մասով ապահովվեն 4-րդ կետում նշված պայմանները:

5.1. Մասնակցության կանոններին բավարարած յուրաքանչյուր հաճախորդ յուրաքանչյուր ամիս էլեկտրոնային նամակով կստանա մասնակցության և նույնականացման հատուկ կոդ(եր):

5.2. Քարտապաններն արշավին կարող են մասնակցել կից քարտերով նույնպես, եթե յուրաքանչյուր կից քարտի մասով ապահովվեն 4-րդ կետում նշված պայմանները:

6. Արշավի շրջանակում վճարային գործարք կհամարվի քարտով առևտրի սպասարկման կետերում կատարված վճարումները՝ բացառությամբ հեռահաղորդակցման ծառայությունների, կոմունալ վճարումների, էլեկտրոնային փողերի, պետական մարմիններին վճարումների (ինչպիսիք են՝ հարկեր, տուրքեր և այլ վճարումներ), բարեգործական հանգանակությունների, գործարքների, որոնց գծով կատարվել է գործարքի հետվերադարձ, խաղադրույքների, բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների կողմից մատուցված ծառայությունների, քարտից քարտ/հաշվից հաշիվ փոխանցվող գումարների դիմաց կատարված վճարումների:

7. Խաղարկության մասնակից չեն կարող հանդիսանալ.

- Արշավի ընթացքում Բիբլոս Բանկ Արմենիայի գործող աշխատակիցները
- 18 (տասնութ) տարին չլրացած հաճախորդները
- Արշավին մասնակցած, սակայն մինչև արշավի ավարտը փակված Mastercard World քարտերի քարտապանները

8. Արշավի արդյունքներն ամփոփվելու են յուրաքանչյուր ամիս՝ 2026 թ. մայիսին, հունիսին, հուլիսին և օգոստոսին, Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում ուղիղ հեռարձակման միջոցով:

9. Յուրաքանչյուր խաղարկությունից առաջ տվյալ խաղարկության հստակ օրվա և ժամի մասին հավելյալ կհայտարարվի Բանկի պաշտոնական ֆեյսբուքյան էջում:

10. Հաղթող կճանաչվեն այն հաճախորդները, որոնց նույնականացման կոդերը պատահականության սկզբունքով դուրս կբերվեն ուղիղ հեռարձակմամբ անցկացվող խաղարկության ընթացքում:

11. Երեք ընթացիկ խաղարկությունների ընթացքում կխաղարկվի 5-ական նվերների փաթեթ՝ յուրաքանչյուրի մեջ մեկ ճամպրուկ, մեկ պարանոցի բարձ: Ամփոփիչ խաղարկության ընթացքում կխաղարկվի 2 ճամփորդական նվեր քարտ և 5 նվերների փաթեթ:

11.1. Եթե որևէ Քարտապան միևնույն խաղարկության ժամանակ պատահականորեն ընտրվի երկրորդ կամ երրորդ միևնույն մրցանակի համար (երկրորդ ճամփորդական նվեր քարտը կամ երկրորդ նվերների փաթեթը), այդ մրցանակը նորից կխաղարկվի, որպեսզի համակարգն ընտրի մեկ այլ հաղթողի, որը խաղարկության շրջանակում որևէ մրցանակ չի շահել:

12. Յուրաքանչյուր խաղարկությունից հետո հաղթող ճանաչված հաճախորդների նույնականացման համարները կհրապարակվեն Բիբլոս Բանկ Արմենիայի ֆեյսբուքյան և ինստագրամյան էջերում:

13. Նվերները հաղթող մասնակիցներին կտրամադրվեն յուրաքանչյուր խաղարկությունից հետո՝ սկսած 3 աշխատանքային օրից: Բոլոր հաղթող մասնակիցներն իրենց շահումները ստանալու համար պետք է այցելեն Բանկի նախապես ընտրված մասնաճյուղերից մեկն ու ներկայացնեն անձը հաստատող փաստաթուղթ:

14. Նվեր քարտ շահած մասնակիցները կարող են օգտագործել իրենց նվեր քարտերը 1 տարվա ընթացքում:

15. Բանկն իրավունք ունի սույն պայմանների և դրույթների մեջ ցանկացած պահի կատարել միակողմանի փոփոխություն և կիրառել փոփոխությունն անմիջապես՝ byblosbankarmenia.am կայքում պաշտոնապես հրապարակելուց հետո:

16. Հրապարակված պայմանների հայերեն և անգլերեն տարբերակների միջև անհամապատասխանությունների դեպքում հիմք է ընդունվում հայերեն տարբերակը: